

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵԿԱՐԶԸ

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԵՐԴՈՒՄ ՓՈԿԱՅՈՒՄ՝ ՓԱՐՎԱՆԱ ԼԵՒ ԱՓԻՆ, ՄՅԻՆԵԹԱՅՈՒՄ, ԱԶԱՐԻԱՅՈՒՄ ԵՎ ՍՎԱՆԵԹՈՒՄ



Վրաստանը կարողացավ վերականգնել իր անկախությունը 70 տարի անց՝ 1991 թվականի ապրիլի 9-ին: Այս տարի եւս, ըստ ավանդույթի, մայիսի 26-ին երկիրը մեծ շուքով նշեց Անկախության հռչակագրի

Մայիսի 26-ին Վրաստանը նշեց Անկախության օրը: 1918 թվականի մայիսի 26-ին Վրաստանի Ազգային խորհրդի որոշմամբ, երկիրը հայտարարվեց անկախ ժողովրդական Հանրապետություն: Նույն ժողովրդական ընտրվեց Հանրապետության նախագահ: Այդ օրը ընդունվեց «Վրաստանի պետականության անկախության ակտը»: Վրաստանի ժողովրդական Հանրապետությունը, որի անկախությունը ճանաչեցին եվրոպական առաջատար երկրները, դադարեց գոյություն ունենալ երեք տարի անց, խորհրդային Ռուսաստանի կողմից օկուպացիայից հետո:

ընդունման 103-րդ տարեդարձը: Միջոցառման շրջանակներում, Թբիլիսիի Ազատության հրապարակում, հանդիսավոր իրավիճակում մարտական պատրաստության կենտրոնի 247 նորակոչիկներ զինվորական երգում տվեցին՝ դառնալով Վրաստանի պաշտպանության նախարարության լիիրավ անդամներ:

Նորակոչիկների երգման արարողությունից հետո, միջոցառմանը խոսքով հանդես եկան Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, պաշտպանության նախարար Ջուրանշեր Բուրժուլաձեն, Լեհաստանի նախագահ Անժեյ Դուդան:

ՍԱԼՈՄԵ ՋՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆ Է՝ ԵՐԵՎԱՆԻ ԳՆԱՐՅԱՏՈՒՄ, ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՏԵՍՆԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»

- 2021 թվականի մայիսի 26-ին մենք նշում ենք 30 տարի առաջ վերականգնված Վրաստանի անկախությունը՝ 70-ամյա խորհրդային տոտալիտար ռեժիմի ավարտը:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԸՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Մայիսի 26-ին, Վրաստանի Անկախության օրվա առիթով, Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլուն, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլուն շնորհավորական ուղերձներ են հղել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը եւ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը:



Հայաստանի նախագահը շնորհավորական ուղերձում նշել է, որ հայ եւ վրացի ժողովուրդները դարեր շարունակ առաջնորդվել են բարիդրացիական հարաբերությունները պահպանելու, սերտ համագործակցությունը շարունակելու եւ ամրապնդելու սկզբունքներով: «Գոհունակությամբ պետք է նշեն, որ այսօր էլ Հայաստանն ու Վրաստանը շարունակում են հետեւողական հոգատարությամբ վերաբերվել երկու

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)



Իրակլի Դարիբաշվիլուն ուղղված շնորհավորական ուղերձում Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը նշել է. «Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Վրաստանի բարեկամ ժողովրդին Վրաստանի ազգային տոնի՝ Անկախության վերականգնման օրվա կապակցությամբ: Ավելի քան մեկ դար առաջ, արտահայտելով

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)


«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԸՆԹԱՑՔԻ՝ ԱՆԽԱԹԱՐ



Արդեն երեսուն տարի է, իմ գլխավորած «Ինտելեկտ» հրատարակչությունը սերտ համագործակցում է վիրահայ համայնքի կրթական, մշակութային կազմակերպությունների հետ, եւ այդ սերտ փոխկապակցության հիմքերը դրեցին «Ինտելեկտի» եւ «Վրաստանի» հարբերությունները:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



Հոբելյանը վաստակ է, ու քո այդ վաստակն արդեն մեկ դարով է չափվում... Եվ այսօր, արդեն փաստելով մեկդարյա գոյությունը, շարունակում ես անցյալը գալիքին կամրջող հուշարձան մնալ: Միտելի «Վրաստան» թերթի խմբագրականի ի դեմս գլխավոր խմբագիր Վան Բայբուրջյանի, ջերմության ու հպարտության մեծագույն զգացումով շնորհավորում եմ «Վրաստան»-ի 100-ամյա փառահեղ հոբելյանի առիթով: Այն տոն է բոլորիս համար՝ մասնով մասին իրենց առաջին պատկերացումները ձեւավորող դեռահասների ու նաեւ տասնամյակներ առաջ պարբերականի շնորհիվ իրենց անցնելիք ուղին գտած անհատների, ում խիստ է պարզելու անեն համարիդ ծնունդը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՆԵՎԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՍԱՐԳԱՐԱՊԱՏԻ ՀԱՐԹԱՆԱԿԻ 103-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 28-ին Հայաստանը նշեց Առաջին Հանրապետության հիմնադրման եւ Սարգարապատի հերոսամարտում տարած պատմական հաղթանակի 103-ամյակը՝ Հանրապետության օրը:

1918-ի մայիսի 28-ին, Թիֆլիսում Անդրկովկասյան ժողովրդավարական դաշնային հանրապետության փլուզումից հետո, «Հայկական ազգային խորհրդի» կողմից հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:



Հայաստանի Հանրապետությունը ընդամենը երկու տարվա կյանք ունեցավ՝ մինչեւ 1920թ. դեկտեմբերի 2-ը:

Հանրապետության օրվան եւ 1918թ. մայիսյան հերոսամարտերին նվիրված պաշտոնական միջոցառմանը մասնակցեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Պետական այրերը ծաղկեպսակներ դրեցին Սարգարապատի հուշահամալիրի մոտ:

COVID - 19

ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՅՈՒՄ Է ՃԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՆՄԱՆՆԵՐԸ

Վրաստանի կառավարության գլխավորած՝ կորոնավիրուսի տարածման կանխարգելման միջոցառման խորհրդի որոշմամբ, հունիսի 1-ից Վրաստանը բացում է ցամաքային սահմանները:

Սահմանը հատել հնարավոր կլինի լիարժեք պատվաստման (երկու չափաբաժին) փաստաթուղթ ներկայացնելու եւ PCR բացասական թեստի պատասխանով, կամ միայն վերջին 72 ժամվա ընթացքում անցկացրած PCR թեստի բացասական պատասխանով: Այս դեպքում, անձինք ստիպված կլինեն կրկնակի թեստ հանձնել՝ հետագա 72 ժամվա ընթացքում: Հիշեցնենք, որ նախորդ տար-

վա մարտի 14-ից Վրաստանը ցամաքային սահմանը փակեց Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի, մարտի 16-ից՝ Ռուսաստանի հետ: Մարտի 18-ից ամբողջությամբ արգելվեց օտարերկրյա քաղաքացիներին հատել Վրաստանի սահմանը, ինչպես նաեւ Վրաստանի քաղաքացիներին արգելվեց լքել երկիրը:

(խորհրդի շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խորհրդանշական է, որ 100 տարի անց՝ Անկախության օրը, այն ժամանակի վրացական բանակի գերագույն գլխավոր հրամանատարը վերադառնում է Վրաստան, որը մինչ այդ ստիպված էր լքել՝ Ռուսաստանի 11-րդ բանակի հարձակման ու գրավման արդյունքում:

Մենք չենք կարող համեմատել անկախության այդ երեք տարիները այսօրվա հետ, սակայն, եթե ուզում ենք ուժեղացնել պետությունը եւ հաղթահարել մարտահրավերները, պետք է առաջնորդվենք նույն սկզբունքով, որը պետք է ուղեկցվի բոլոր հիմնական նպատակներով՝ ճիշտ գնահատում, իրատեսական տեսլական եւ գործողությունների ծրագիր:

ԻՐԱՎԻ ԴՈՒՐԲԱՇԿԻԼԻ. «ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԻ ԺԱՆԱԳՈՒԹՅԱՄԲ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՍԿԵՑԻՆԷ ԱՐԴԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ»



- Մայիսի 26-ը մեր ազգային նույնականացման, բազմադասյա մշակույթի եւ ազատության միտվածության արտահայտումն է: Ազատության գաղափարը միշտ եղել է այն գլխավոր ուղեցույցը, որը միավորել էր բոլոր հայրենասերներին, եւ ովքեր իրատեսական դարձրին մեր երկիրն անկախությունը:

Մեր երկրի անկախությունը բազում սերունդների պայքարի ու անձնագոհության արդյունք է:

100 տարի առաջ, Վրաստանի առաջին ժողովրդավարական Յանրապետությունը, որ միտված էր դեպի արեւմտյան արժեքների եվրոպական պետության կազմավորում, դարձավ խորհրդային բռնազավթման զոհ: Չնայած, բռնազավթումն է՛լ ավելի ուժեղացրեց վրաց ազգի ցանկությունը՝ հիմնել անկախ եւ հզոր պետություն ու դառնալ արեւմտյան աշխարհի մասը: Այդ օրերի մեծ հայրենասերի, վրաց գեներալ, Վրաստանի ազատության եւ անկախության համար պայքարի գլխավոր խորհրդանիշի՝ Գիորգի Կվինիտաձեի աճյունը Վրաստան տեղափոխումը հաստատում է նվիրումն ու հավատարմությունը Վրաստանի ազատության գաղափարին: 30 տարի առաջ մեր նախնիների ժառանգության եւ անցյալի գիտակցմամբ, Վրաստանում սկսվեց արդի պետության կառուցումը:

ԿԱՆԱ ԿՈՒՃԱԿԱ. «ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԻՄԸ ՎԱՐՈՒՄ Է ԽԱՂԱՐՈՒԹՅԱՆԸ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԵՐԻ ՄԻՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

- Երկրի անկախության եւ ազատության համար տրված գինը շատ մեծ է, եւ մեզանից յուրաքանչյուրին պարտավորեցնում է երբեք չմոռանալ հայրենիքի համար զոհ-

ված հերոսներին: Խորհրդանշական է, որ հենց մայիսի 26-ին Անկախության օրը, վրացական հողին կհանձնենք Վրաստանի անկախության եւ ազատության համար պայքարող ասպետի, անկախ Վրաստանի գլխավոր հրամանատարի, գեներալ Գիորգի Կվինիտաձեի աճյունը: Դա նրա վկայությունն է, որ մենք հարգում եւ գնահատում ենք Հայրենիքի նվիրյալներին:



Պետականության վերականգնումը պահանջեց բազում սերունդների վիթխարի ջանքեր, եւ այսօր դրա պահպանումը եւս պահանջում է ոչ պակաս աշխատանք եւ անձնագոհություն, որպեսզի ամրացնենք ու հզորացնենք վրաց պետությունը: Մեր քաղաքական թիմի ընտրությունն է խաղաղության համագործակցությանը եւ արդյունքին կողմնորոշված քաղաքականությունը, որպեսզի հնարավորինս արագ կարողանանք հաղթահարել մարտահրավերները, եւ երկիրն անշեղորեն կարողանա զարգանալ: Հենց դա է մեզանից սպասում ժողովուրդը:

ԱՆՋԵՅ ԴՈՒՂԱ. «ՄԵՐ ՓՈԽՅԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ, ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ, ԺՈՂՈՎՐԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՁԱՆՔԻ ՍԿՋՐՈՒՆԵՐԻ ՎՐԱ»



- Վրացիները սրտով միավորված են եվրոպային, քանի որ դարեր շարունակ եղել են նրա ժառանգության մի մասը, սրտով գտնվում են ՆԱՏՕ-ում, քանի որ հպարտ ազգ են, որն արժանի է ազատության, անվտանգության եւ բարօրության:

ՆԱՏՕ-ում եւ Եվրամիությունում բավական տեղ կա մեր բարեկամների համար, առավել եւս այսօր, ներկայիս իրավիճակում պետք է պահպանել ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության բաց դռների քաղաքականությունը: Ցանկանում են ընդգծել, որ համընդհանուր Լեհաստանի եւ լեհերի, ունեք մշտական դաշնակից, որը բոլոր ջանքերը կգործադրի, որպեսզի աջակցի Վրաստանին եւ նրա Եվրատլանտյան պայմանագրի ինտեգրմանը: Մեր փորձից գիտենք, թե որքան ջանքեր են պահանջում բարեփոխումները, եւ Եվրամիությունն ու ՆԱՏՕ տանող ճանապարհը բավական դժվար է, որը երբեմն մնում է անկատար: Հավատացնում են, որ այդ ամենի համար արժե ջանքեր գործադրել, ուստի կոչ են անում շարունակել բարեփոխումների ճանապարհը, պահպանեք եվրոպական չա-

փորձիչները քաղաքական միասնության հաստատման ու քաղաքական երկխոսության հարցում: Եվրամիության երկրները պետք է միշտ հիշեն, որ այստեղ կա եվրոպական քաղաքակրթության մաս, դա հնագույն Կոլխիդան է, դա վրացական ժառանգությունն է: Եվրոպական մշակույթն այսօր նշանակում է հարգանք հիմնարար արժեքների ժողովրդավարության, խոսքի եւ հավաքների ազատության նկատմամբ: Ազատությունը, անկախությունը, ժողովրդավարությունը, հարգանքն ու համերաշխությունն այն սկզբունքներն են, որոնք դրված են մեր փոխաբերությունների հիմքում:

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ ԵԶՐԱՓՈՎԱԿԵՑ ԳԱԼԱ ՀԱՄԵՐԳՈՎ

Ազատության հրապարակում, հանդիսավոր զինվորական շքերթի շրջանակներում, ներկայացվեցին «Դիզգորի» վրացական ռազմական զրահամեքենայի տարբեր տեսակներ, ինչպես նաեւ Պաշտպանության ուժերի սպառազինությունում գտնվող զրահամեքենաներն ու հրետանային զենքերը: Ազատության հրապարակում միջոցառումն ավարտվեց պաշտպանության ուժերին պատկանող նորացված «Սու 25» կործանիչների թռիչքով:

Օրվա վերջում, Ջաքարիա Փալիաշվիլու օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում կայացավ Անկախության օրվան նվիրված գալա համերգ:

ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՐՈՒՄԸ ՓՈԿԱՅՈՒՄ ՓԱՐՎԱՆԱ ԼԵՒ ԱՓՆ



Մայիսի 26-ին Վրաստանի Անկախության օրը, տոնական միջոցառումների շրջանակներում անցկացվեց 247 նորակոչիկների զինվորական երդման արարողությունը, եւ նրանք դարձան Վրաստանի Պաշտպանության ուժերի լիիրավ անդամներ:

Թբիլիսիի զուգահեռ երդման արարողություններ տեղի ունեցան Վրաստանի տարբեր շրջաններում՝ Սամցխե-Ջավախխեթում՝ Փարավանա լճի ափին, Սվանեթիում՝ Ուշբայի եւ Թեթուլդի լանջերին, Աջարիայում՝ Պետրայի ամրոցում, Կախեթիում՝ Նեկրեսի վանական համալիրում եւ Սուրբ Մցխեթա քաղաքում:

Զինվորական երդում տալու մասին, Վրաստանի նախագահ, Պաշտպանության ուժերի գերագույն հրամանատար Սալոմե Ջուրաբիշվիլուն զեկուցել է Պաշտպանության ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Գիորգի Մաթիաշվիլին:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

2021 թվականի մայիսի 26-ին լրացավ Վրաստանի ժողովրդավարական Յանրապետության 103-րդ տարեդարձը եւ Խորհրդային Միությունից անկախության վերականգնման 30-ամյակը:

1918 թվականի մայիսի 26-ին Վրաստանի Ազգային խորհուրդը առաջին իսկ նիստում հռչակեց Վրաստանի անկախությունը: Չնայած իր կարճատև գոյությանը (1918-1921թթ.)՝ Վրաստանի ժողովրդավարական Յանրապետությունը անչափելի ազդեցություն ունեցավ երկարաժամկետ հեռանկարում Վրաստանի պետականության զարգացման գործում: Անկախության ակտը սահմանեց պետության կառավարման եւ քաղաքականության հիմնական սկզբունքները՝ պետական ինքնիշխանություն, ժողովրդավարական Յանրապետություն՝ որպես անկախ Վրաստանի քաղաքական գոյության ձև, բարյացակամ վերաբերմունք այլ պետությունների, հատկապես հարեւանների նկատմամբ, քաղաքացիական եւ քաղաքական ազատություն, ազգային փոքրամասնությունների ազատ զարգացում: Վրաստանը դարձավ առաջին երկրներից մեկը, որտեղ կանայք ունենին ընտրելու եւ ընտրվելու իրավունք: Այս ամենը օրգանապես կապված էր 1921թ. սահմանադրության հետ, որը հիմնված էր ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների վրա եւ նպատակ էր հետապնդում Վրաստա-

նում հիմնելու եւ ամրապնդելու ժողովրդավարական ինստիտուտներ: 1991 թվականի երկիրը վերականգնեց իր անկախությունը, որը ջրբաժանի դեր խաղաց Վրաստանի պատմության մեջ եւ սահմանեց երկրի ապագան: 1991թ. մարտի 31-ին անցկացված հանրաքվեի ընթացքում բնակչության 99,08 տոկոսը (ներառյալ՝ Հարավային Օսիայի նախկին ինքնավար շրջանի եւ Աբխազիայի Ինքնավար Յանրապետության բնակչությունը) կողմ է քվեարկել տրված հարցին. «Համաձայն եք, թե՞ ոչ Վրաստանի պետական անկախության վերականգնմանը 1918 թվականի մայիսի 26-ի ակտի հիման վրա» (ընդհանուր 3 672 403 զրանցված ընտրողից մասնակցել է 3 326 100 մարդ (90,57%): Աջակցության դիրքորոշում են հայտնել 3 295 493 ընտրող (99,08%), դեմ՝ 16 917 (0,51%), փչացած / դատարկ քվեաթերթիկ՝ 13 690 (0,41%): Համապատասխանաբար, Վրաստանի Գերագույն խորհուրդը միաձայն ընդունեց Վրաստանի պետական անկախության վերականգնման ակտը 1989թ. ապրիլի 9-ին խորհրդային բանակի կողմից Թբիլիսիում խաղաղ ցույցի արյունալի ճնշումից ուղիղ երկու տա-

րի անց: Իր անկախությունը վերականգնելուց ի վեր Վրաստանը դարձել է թշնամական պետության համար հիբրիդային պատերազմի թիրախ, որի նպատակն է ապակայունացնել երկիրը՝ պահել իր ազդեցության տակ եւ խոչընդոտել նրա ժողովրդավարական զարգացմանն ու արեւմտամետ արտաքին քաղաքական ընտրությանը: Այսօր էլ Վրաստանը ներգրավված է տարածքային ամբողջականության համար պայքարում: Չնայած մարտահրավերներին, վերջին երեք տասնամյակների ընթացքում Վրաստանը մեկ անգամ եւս քայլ առ քայլ ամուր հիմք դրեց անկախ պետության կառուցման գործընթացին: Պետությունը շարունակում է ամենօրյա աշխատանքը: Անկախության երեսուն տարիները զգալի փոփոխություններ բերեցին երկրին եւ բնակչությանը: Ուժեղ ոգին եւ նպատակասլացությունը հնարավորություն տվեցին պետությանը եւ նրա հասարակությանը հաղթահարել հսկայական խոչընդոտներ, ինչը ավելի հզորացրեց եւ ամրապնդեց երկիրը: Վրաստանը կայացել է որպես միջազգային հանրության վստահելի գործընկեր: Երկրի աշխարհաքաղաքական, տնտեսական եւ մշակութային շահերը գլոբալ են, միաժամանակ, նրա անվտանգությունը, քաղաքական եւ տնտեսական կայունությունը բխում են աշխարհի շատ երկրների շա-



հերից: Աշխարհի հետ կապակցվելու ոգեշնչմամբ երկիրը ստեղծել է շարունակում է վարել անսասան արտաքին քաղաքականություն ու պրոակտիվ դիվանագիտություն՝ առաջնորդվելով օրինաչափությամբ, կայունությամբ եւ կանխատեսելիությամբ: Վրաստանը եւ Հայաստանը կապված են ժողովուրդների միջեւ հարաբերություններով, քաղաքական եւ տնտեսական համագործակցությամբ եւ բարիդրացիական համակեցության երկար պատմությամբ: Անհրաժեշտ է է՛լ ավելի խորացնել եւ ամրապնդել այդ կապերը:

Գիորգի Սազանելիձե
Հայաստանում Վրաստանի արտակարգ
եւ լիազոր դեսպան

ԱՐԺԱՆԻ ԳԼԱՅԱՏՈՒՄ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՆԿԱԽ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԳԵՆԵՐԱԼ ԳԻՈՐԳԻ ԿՎԻՆԻՏԱԶԵԻ ԱՃՅՈՒՆԸ

Մայիսի 26-ին, Վրաստանի Անկախության օրվա շրջանակներում կայացավ Վրաստանի ժողովրդավարական հանրապետության Ձինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Գիորգի Կվինիտազեի աճյունը հայրենի հողին հանձնելու հանդիսավոր արարողությունը:




Մինչևե հուղակավորությունը, Թբիլիսիի Սուրբ Երրորդության տաճարում անցկացվեց Վրաստանի ազգային հերոսի հոգեհանգստի արարողությունը: Տաճարում, ինչպես նաև Վրաց գրողների և հասարակական գործիչների Մթածինդայի պանթեոնում կայացած արարողություններին ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեն:

Գիորգի Կվինիտազեն ծնվել է 1874 թվականին: Նա ռազմական կրթություն ստացել է Թբիլիսիում եւ Պետերբուրգում: Ակտիվ մասնակցել է Վրաստանի Ձինված ուժերի կազմավորմանը, տարբեր ճակատներում շարունակվող ռազմական գործողություններին: 1921 թվականի ռուս-վրացական պատերազմի ժամանակ փետրվարի 16-ին, վերանշանակվել է Ձինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնում: Խորհրդային Ռուսաստանի կողմից Վրաստանի օկուպացիայից հետո, գեներալ Կվինիտազեն կառավարության եւ հրամանատարության այլ անդամների հետ

արտագաղթեց: Կյանքի վերջին տարիներին ապրում էր Ֆրանսիայում, որտեղ եւ մահացել է 1970 թվականին:

Ավելացնենք, որ 1921թ. գեներալի հետ երկրից արտագաղթողների թվում էր քուբայիցի կադետ 21-ամյա Մելիք Սոմխյանցը (Նրա մասին «Վրաստանը» տպագրել է ընթացիկ տարվա ապրիլի 17-ի համարում):



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՄԻ ԴԵՄ ՕԴԱՆԱԿԻ ԲՈՆԻ ՎԱՅՐԵԶՔԻ ՀԱՍԱՐ

Եվրոպական միության գազաթափողովում որոշում է կայացվել ընդլայնել Բելառուսի դեմ սահմանված տնտեսական պատժամիջոցները եւ սեւ ցուցակում նոր անձանց ու կազմակերպությունների անուններ ներառել:

Պատժամիջոցները սահմանվել են Ryanair ավիաընկերության Boeing 737-800 օդանավի պատճառով, որը, մայիսի 23-ին Աթենք-Վիլնյուս չվերթն իրականացնելիս, արտակարգ վայրէջք է կատարել Մինսկում: Վայրէջքից հետո, օդանավակայանում ձերբակալվել է չվերթի ուղևորներից մեկը՝ բելառուսական ընդդիմադիր NEXTA թելեգրամայան ալիքի համահիմնադիր Ռոման Պրոտասենիչը: Վերջինիս 15 տարվա ազատազրկում է սպառնում: Նրա նկատմամբ գործ է հարուցվել զանգվածային անկարգությունների մասնակցելու համար:

ՍԻՐԻԱ

ԲԱՇԱՐ ԱՍԱԴԸ 95 ՏՈԿՈՍՈՎ ՀԱՂԹԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մայիսի 26-ին Սիրիայում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Ներկայացված 3 թեկնածուների թվում, Սիրիայի գործող նախագահ Բաշար Ասադը ստացել է ընտրողների 95,1 տոկոսի աջակցությունը եւ երրորդ անգամ ընտրվել Սիրիայի նախագահ:

ՈՎՋՄԱՎԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ ՆԱԽԱԳԱԶԸ ԴԻՊԼՈՄՆԵՐ ՀԱՆՁՆԵՅՑ ԵՐԿՈՒ ՎՐԱՅՑ ԵՐԶԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ



Վրաստանի ներքին գործերի նախարարության աջակցությամբ, ԱՄՆ մերձափնյա պաշտպանության ակադեմիայի շրջանավարտներ Նիկոլոզ Տվիլիդանուն եւ Սամրոտ Ստաժանեին բուհի ավարտական դիպլոմներ է հանձնել ԱՄՆ նախագահ Ջորջ Բայդենը:

Կենտուկիի նահանգի Նյու Լոնդոն քաղաքում կայացած հանդիսավոր արարողությանը, ամերիկական Վրաստանի մերձափնյա գործերի նախարարության մերձափնյա ոստիկանության պետ, գե-

ղապետ Նիկոլոզ Շարաձեն եւ մերձափնյա պաշտպանության դեպարտամենտի տնօրեն, առաջին կարգի կապիտան Ռամազ Պապիձեն: Այս տարի ԱՄՆ մերձափնյա պաշտպանության ակադեմիան ավարտեց 240 կուրսանտ: 7 օտարերկրացիների թվում է, Վրաստանի երկու ներկայացուցիչ: Նշենք, որ վրաց զինծառայողները ուսման նպատակով Միացյալ Նահանգներ են մեկնել 2017 թվականին:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԵՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

(Սկիզբը՝ 1-ին էջում) Երկրների միջեւ ձեւավորված բազմաշերտ հարաբերություններին:

Ուրախ եմ, որ Վրաստան կատարած իմ պաշտոնական այցի ընթացքում հնարավորություն ունեցանք քննարկելու մեր երկրների գործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր: Որպես տարածաշրջանի երկու հարեւան եւ բարեկամ պետությունների նախագահներ՝ հանձնառու ենք նվիրումով եւ պատվով ծառայել մեր ժողովուրդներին ու շարունակել համատեղ ջանքերը՝ հաջորդ սերունդներին փոխանցելու մեր նախնիներից ժառանգած բարեկամական հարաբերությունները»,- մասնավորապես ասված է Արմեն Սարգսյանի շնորհավորական ուղերձում:

Վրաստանի Անկախության օրվա կապակցությամբ ֆեյսբուքյան իրենց էջերում վազերենով շնորհավորական գրանցումներ են կատարել նաև Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահներ, ԱԺ Հայաստան-Վրաստան բարեկամական խմբի ղեկավար Լենա Նազարյանը եւ Ալեն Սիմոնյանը:

Վրաստանի Անկախության օրվա առիթով շնորհավորական ուղերձներ են հղել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը, Միացյալ Թագավորության թագուհի Եղիսաբեթ Երկրորդը, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Լիտվայի վարչապետ Ինգրիդա Շիմոնիտենը:

(Սկիզբը՝ 1-ին էջում) սեփական անկախ պետականությունն ունենալու վերաբերյալ իր անբեկանելի կամքը, բարեկամ վրաց ժողովուրդն այսօր էլ հետեւողականորեն շարունակում է վերահաստատել իր այդ ձգտումը՝ կառուցելով եւ զարգացնելով Վրաստան պետությունը:

Հարգելի պարոն վարչապետ, Հայաստանը եւ Վրաստանն իրենց պետականաշինության ընթացքում մշակել եւ ներդրել են այնպիսի փոխգործակցության նախադրյալներ, որոնց իրականացմամբ հնարավոր է եղել մեր երկրների միջեւ հարաբերությունները լավագույնս պահպանել եւ զարգացնել: Այսօր էլ առաջնորդող է այն տեսակետը, որ մեր երկրները շատ անելիքներ ունեն ինչպես երկկողմ հարաբերություններում, այնպես էլ՝ տարածաշրջանային գործընթացներում: Այս համատեքստում աներկբա է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ համագործակցությունը խորացնելու եւ այն նորանոր ձեռքբերումներով հարստացնելու մեր հանձնառությունը:

Օգտվելով առիթից՝ մաղթում եմ Ձեզ հաջողություն Ձեր պետական գործունեության մեջ, իսկ եղբայրական Վրաստանի ժողովրդին՝ բարգավաճում եւ առաջընթաց»,- նշված է Հայաստանի վարչապետի պաշտոնակատարի ուղերձում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ԳՈՒՅՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԸ



Մայիսի 26-ին Հայաստանի մայրաքաղաք Երեւանի կրկեսի շենքին եւ մուլտիմեդիայի կերաններին, ի պատիվ Վրաստանի Անկախության օրվա, պատկերվել է Վրաստանի պետական դրոշը:

Օրվան նվիրված միջոցառում է կազմակերպվել Երեւանի Մխիթար Սեբաստացու անվան կրթահամալիրում՝ կրթօջախի աշակերտների մասնակցությամբ: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սազանելիձեն տիկնոջ եւ դեսպանության աշխատակիցների հետ:

ԵՐԵՎԱՆ. ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՆՇՎԵՅՑ ՍԵՔԱՍՏԱՅԻ ԿՐԹԱՆԱՄԱԼԻՐՈՒՄ



Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սազանելիձեն տիկնոջ՝ Էկա Բաքրաձեի հետ, մայիսի 26-ին ներկա գտնվեց Երեւանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի աշակերտների եւ մանկավարժների կազմակերպած տոնական հանդիսության, որը նվիրված էր Վրաստանի Անկախության օրվան:

Հանդիսության սկզբում կրթահամալիրի երգչախմբի կատարմամբ հնչեցին Վրաստանի եւ Հայաստանի օրհներգերը: Այնուհետեւ, հյուրերին վրացերեն ողջունեցին կրթահամալիրի վրաց լեզվի ուսուցչուհի Ռինա Շահինյանի աշակերտները, իսկ «Սեբաստացիներ» վոկալ համույթի սաները հանդես եկան վրացական երգերով:

Տիկին Էկա Բաքրաձեն իր ելույթում գոհունակությամբ ընդգծեց նշյալ կրթահամալիրի ու Վրաստանի դեսպանատան միջեւ տարիների ընթացքում առկա բարեկամական հա-

րաբերությունները: Նրա խոսքով, վրաց եւ հայ ժողովուրդների զանձը այն բարեկամությունն է, որը շարունակական է երկու ազգերի համար:

Հայաստանի եւ Վրաստանի կրթության ու գիտության նախարարությունների հովանավորությամբ, 2009 թվականից իրականացվում է «Վրաստան-Հայաստան հանրակրթական կամուրջներ» նախագիծը: Նախագծի շրջանակներում, կրթահամալիրի միջին եւ ավագ դպրոցների սովորողների ընտրությամբ, անցկացվում են նաև վրաց լեզվի դասընթացներ, գործում են վրացերենի ակումբ ու առցանց հարթակներ:

Բացի այդ, Թբիլիսիի թիվ, թիվ 98, 37,

24, 6 դպրոցների հետ կազմակերպվում են համատեղ ուսումնական ծրագրեր կրթական փոխանակման բաղադրիչով, ինչպես նաև Վրաստանին ու վրացական մշակույթին առնչվող նախագծեր, մրցույթներ («Կարդում ենք Ռուսթավելի», «Լեոնարդո դա Վինչի», Էկոդաս, Թբիլիսյան պլեններներ, «Նկարում ենք Փիրոսմանի» եւ այլն): Կրթահամալիրի սաներն ընդգրկվում են Անակլիայի, Սվամեթիի, Բուլաշաուրիի, Բակուրիանիի, Մանավիի ստեղծագործական, իսկ վրացի աշակերտները՝ Մխիթար Սեբաստացի հաստատության կազմակերպած ստուգատեսային ճամբարներում:

ԿԱՐԻՆԵ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ


ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՓԱԹԵԹԸ ԶԱՍՏԱՏՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ

Մայիսի 25-ին Վրաստանի խորհրդարանն իր լիազուցված նիստում առաջին ընթերցմամբ հաստատեց ընտրական բարեփոխումները:

Օրինագծին աջակցել է 92 պատգամավոր, այդ թվում կառավարող «Վրացական երազանք» թիմի անդամները, ինչպես նաև ընդդիմության ներկայացուցիչներ, մասնավորապես «Լեյոն», «Ռազմավարություն» Շինարար», «Քաղաքացիներ», «Եվրոպացի սոցիալիստներ»:

Օրինագծի երկրորդ ընթերցմամբ ընդունվում են նախատեսվում է Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականների մասին հայտնի դառնալուց հետո: Հանձնարարականները, հավանաբար կլինեն հունիսի սկզբին: Իսկ երրորդ ընթերցմամբ փոփոխություններ կընդունվեն նախատեսվում է հունիսի վերջին: Ինչ վերաբերում է ընդհանրապես ընտրական բարեփոխումներին, ապա բարեփոխումը նախապատրաստվել է ընդդիմության եւ իշխանությունների միջեւ խորհրդատվությունների հիման վրա:



ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒՂԻՈՆ՝ 96 ՏԱՐԵԿԱՆ



Հաղորդակցության եւ կապի շենքից երկրում առաջին ռադիոհաղորդումը եթեր է հեռարձակվել 1925 թվականին: Այսօր Վրաստանի ռադիոն ծածկում է ամբողջ երկիրը: Առաջնան որակը բարելավվել է: Գոյություն ունեցող ծրագրերը թարմացվել են, մեկնարկել նոր ծրագրեր: Ստեղծվել է նաև բջջային հավելված: Քաղաքական, սոցիալական, կրթական, ճանաչողական, տնտեսական, մշակութային եւ սպորտային ծրագրերը հարմարեցված են տարբեր տարիքի եւ ճաշակի ունկնդիրների համար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ՀՈՐԶ

«Համաներման մասին» օրինագծի շուրջ խորհրդարանում ընթանում են խորհրդակցություններ:

Այժմ հանդիպումն ընթանում է խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի հետ: Հանդիպմանը մասնակցում են «Լեյոն», «Քաղաքացիներ», «Ռազմավարություն» Շինարար» եւ «Գիրչի» կուսակցությունների ներկայացուցիչներ: Հանդիպմանը քննարկվում է, թե ում պետք է վերաբերի համաներման, եւ արդյոք այն պետք է շտկվի:

Նշենք, որ խորհրդարանի լիազուցված նիստին նախատեսվում է քննարկել «Համաներման մասին» երկու օրինագիծ, որոնք երկու օր առաջ հետաձգվել էին խորհրդակցությունների պատճառով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՏՆԵՐ» ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեզաձեի խոսքով, այն շրջաններում, որտեղ չկա Արդարադատության տուն եւ հասարակական կենտրոն, կժամանի «Արդարադատության շարժական տուն»:

Արդարադատության նախարարությունը նախատեսում է ձեռք բերել միկրոավտոբուսներ, որոնք հագեցած կլինեն հատուկ սարքավորումներով եւ բնակչությանը տեղում կմատուցեն անհրաժեշտ ծառայություններ:

Ճանց հնարավորինս լայնորեն օգտվել մեր կողմից առաջարկվող ծառայություններից, - ասաց արդարադատության նախարարը:

Մենք ցանկանում ենք ստեղծել առավել հարմարավետ պայմաններ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք ազատորեն այցելեն Արդարադատության տներ: Մենք նախատեսում ենք ձեռք բերել հատուկ սարքավորված տրանսպորտային միջոցներ: Սա կօգնի հաշմանդամություն ունեցող ան-

ինչպես նշեց նախարարը, արդարադատության նախարարության հետագա ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը կիրապարակվի առաջիկայում:



ԱՐՏԱՍԱՅՄԱՆՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻՆ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ՝ ԿԵՆ ԳՆՈՎ, ԻՍԿ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԿԱՅԱԿԱՆԸ՝ ԱՆՎՃԱՐ

Վրաստանի նախագահի եւ արդարադատության նախարարի նախաձեռնությամբ, Սփյուռքի օրվա առթիվ, մայիսի 24-ից հունիսի 7-ը, արտերկրում ժամանակավորապես բնակվող Վրաստանի քաղաքացիներն անձը հաստատող էլեկտրոնային վկայականը կստանան անվճար, իսկ կենսաչափական անձնագիրը՝ կես գնով:

Արդարադատության նախարարության մամուլի ծառայության տեղեկատվությամբ, կենսաչափական անձնագիրը կես գնով կստանա այն քաղաքացին, ով երբեք չի ունեցել Վրաստանի քաղաքացու կենսաչափական անձնագիր, որի կենսաչափական անձնագրի ժամկետը լրացել է կամ լրանում է 2021 թվականի հունիսի 7-ին, ով ունի հին, ոչ կենսաչափական անձնագիր:



Էլեկտրոնային վկայական, ով ունի հին, լամինացված անձը հաստատող փաստաթուղթ, ում էլեկտրոնային բարտի ժամկետը լրացել է կամ լրանում է 2021 թվականի հունիսի 7-ին: Հատուկ ակցիայից օգտվելը Վրաս-

տանի քաղաքացիների կողմից կնպաստի սահմանի անխտընդոտ հաստանը, գործավարության եւ արտերկրում գտնվելու դեպքում Վրաստանի պետության կողմից առաջարկվող էլեկտրոնային ծառայությունների անխափան օգտագործմանը: Անձը հաստատող փաստաթղթերը կօգնեն օտար երկրներում գտնվող քաղաքացիներին օգտվել իրենց ծայրի իրավունքից:

Արտասահմանում բնակվող Վրաստանի քաղաքացիները պետք է դիմեն արտասահմանում գտնվող Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կամ հյուպատոսական հաստատություններին՝ մասնակցելու հատուկ ակցիային,- ասված է արդարադատության նախարարության հայտարարության մեջ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐՉ ԶԱՍՏԱՆՈՒՄ ՇՆՈՐՀԵՑ 12 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահի մամուլի ծառայության փոխանցմամբ, մայիսի 26-ին Վրաստանի նախագահը համաներում է շնորհել 10 դատապարտյալի: Նրանցից երեքը ամբողջությամբ ազատվել են պատիժը կրելուց, իսկ յոթ դատապարտյալի քրեակատարողական հաստատությունում մնալու եւ պատիժը կրելու ժամկետը կրճատվել է: Համաներման ակտը վերաբերում է նաև երկու պայմանական բանտարկյալի:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԹԱՆԿԱՆՈՒՄ Է ԲՆԱԿԱՆ ԳԱՋԸ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի որոշմամբ, 2021 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, Թբիլիսիում 1 խորանարդ մետր բնական գազի սակագինը ավելանում է շուրջ 8 թեթրիով եւ այսուհետ այն կկազմի 54 թեթրի մայկին 46-ի փոխարեն:

Ինչպես հայտարարվել է նիստի ժամանակ, «Թբիլիսի էներջի» ընկերությունը, որը մայրաքաղաքն ապահովում է բնական գազով, ավելի քան 20 մլն լարիի պարտք է կուտակել, ինչը պայմանավորված է եղել ազգային արժույթի փոխարժեքի տատանումներով:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՆԱՄԱՆԿԱՆՇԷԿ». ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՍԱԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԸՆԴԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ

Եթե մեկ վայրկյան նույնիսկ կասկածեք, որ «ՆամախվանՅԷԿ»-ի նախագիծը ռազմավարական է Վրաստանի համար, ապա այսօր այստեղ կանգնած չէի լինի, եւ հնչող հրաժարականի ոչ մի կոչ պետք չէր գա,- մեկնաբանելով «ՆամախվանՅԷԿ»-ի շինարարության շուրջ ծավալվող իրադարձությունները հայտարարել է Վրաստանի Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար, Նաթիա Թուրնավան:

Ինչ վերաբերում է նրանց պահանջներին եւ իմ հրաժարականին, եթե ես մեկ վայրկյան նույնիսկ կասկածեմ, վստահ չեմ, որ երկրի անկախությունը անցնում է էներգամակախության ճանապարհով, եւ այս նախագիծը, ինչպես տեղական այլ գեներացիոն նախագծեր մեզ համար շատ ռազմավարական չեն, ապա այսօր այստեղ կանգնած չէի լինի, եւ հրաժարականի ոչ մի կոչ պետք չէր գա:

պես առավել տեսանելի, լավ ուսումնասիրված, կատարյալ նախագծերից մեկը, կլինի այս համակարգի կարելուր ներդրումներից մեկը, ուստի մենք կշարունակենք աշխատել,- ասաց Նաթիա Թուրնավան եւ հավելեց, որ բողոքողների հետ շփումը պետք է լինի ճիշտ ձևաչափով:

Մեր ծրագիրը նույնն է, ինչպես կար, միայն եւ միայն երկխոսություն, շփում: Բայց նորից եմ ասում, հաղորդակցությունը պետք է տեղի ունենա ճիշտ ձևաչափով, փորձագետների, գիտնականների ներգրավմամբ: Փողոցային ռեժիմում անհնար է խոսել սեյսմիկայի, երկրաբանության եւ հիդրոէներգիայի կայունության

մասին: Սա խնդիր է, որը պետք է պարզաբանվի փորձագետների ներգրավմամբ,- հայտարարեց նախարարը:

Ինչ վերաբերում է ՅԷԿ-ի շինարարության դեմ բողոքի ալիքին, ապա «Ռիոնի»-ի կիրճի պաշտպանները Թբիլիսիում մի քանի օր անդադար բողոքի ցույցեր ու երթերկազմակերպելուց հետո, վերադարձել են Գումաթի գյուղ, որտեղ փակել են ճանապարհը ՆամախվանՅԷԿ-ը կառուցող թուրքական «ԷՆԿԱ» ընկերության դիմաց, քանի որ հենց այդ ճանապարհով է ընկերությունը տեղափոխում տեխնիկան ՅԷԿ-ի կառուցման վայր: Նրանք տեղում ուստիկաններից պահանջում են հանել երկաթե պատնեշը:

«Ռիոնիի կիրճի պաշտպանների» պահանջն է, որ «ԷՆԿԱ» ընկերությունը լքի Ռիոնիի կիրճը, դադարեցվի ընկերության հետ պայմանագիրն ու չեղյալ հայտարարվի 2015-ից առկա ողջ թղթա-

բանությունը: Պահանջում են նաև Էկոնոմիկայի ու կայուն զարգացման նախարար Թուրնավանի հրաժարականը, ինչպես նաև նախագծում ուղղակիորեն մասնակցող բոլոր անձանց պատասխանատվության ենթարկելը:

Նշենք, որ 2020 թվականի հոկտեմբերից Արեւմտյան Վրաստանով հոսող Ռիոնի գետի վրա՝ Նամախվանիում սկսվեցին ՅԷԿ-ի շինարարական աշխատանքները, որին դեմ են բնապահպաններն ու տեղի բնակիչները, ինչպես նաև քաղաքացիական կառուցողական կառավարության, պետք է լինի անկախ Վրաստանի խոշորագույն էներգետիկ նախագիծը: Նախագծի ներդրումային արժեքը կազմում է 800 մլն դոլար, եւ այն պետք է իրականացնի թուրքական «Enka Riniebs Ltd» ընկերությունը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ